



«Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Հաշմանդամությանն առնչվող ճիշտ և սխալ տերմինաբանություն

Փոխհարաբերությունները սկսվում են վերաբերմունքից, իսկ վերաբերմունքը հաճախ ձևավորվում է կիրառվող տերմինաբանության ազդեցության տակ:

Երբ խոսում կամ գրում եք հաշմանդամություն ունեցող անձանց մասին, ընտրեք արժանապատվություն և հարգանք արտահայտող բառերն ու արտահայտությունները: Կիրառեք այնպիսի տերմիններ, որոնք նկարագրում են անձի հաշմանդամությունը՝ խուսափելով անձի և նրա հաշմանդամության նույնացումից:

Օգտագործեք բառեր և հասկացություններ, որոնք չեն ստեղծում կարծրատիպեր	Խուսափեք կարծրատիպեր ստեղծող բառերից և հասկացություններից
Հաշմանդամություն ունեցող մարդ/անձ, ֆունկցիոնալ խանգարում ունեցող մարդ	Հիվանդ, անլիարժեք, արատավոր, սահմանափակ կարողություններով/ հնարավորություններով մարդ, անկարողունակ, ՀՈՒԱ («հաշմանդամություն ունեցող անձ» արտահայտության հապավումը), ԿԱՊԿՈՒ («կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող» արտահայտության հապավումը)
Հաշմանդամություն չունեցող մարդ/անձ, կարող է քայլել, տեսնել, լսել և այլն (ի տարբերություն հաշմանդամություն ունեցող, չտեսնող, չլսող և այլն մարդու)	Նորմալ, առողջ (ի տարբերություն հաշմանդամություն ունեցող անձի)
Անվասայլակից օգտվող մարդ, սայլակավոր մարդ, ողնուղեղի վնասվածք ունեցող մարդ, սպինալ հաշմանդամ	Անվասայլակին գամված
Ի ծնե հաշմանդամություն ունեցող մարդ, մանկուց հաշմանդամ	Ի ծնե արատ, դժբախտություն
Մանկական ցնցակաթված (կամ նման այլ բան) ունի	Տառապում է մանկական ցնցակաթվածով
Տարել է պոլիոմիելիթ, պոլիոմիելիթի հետևանքով հաշմանդամություն ունի, հիվանդություն տարած մարդ, հաշմանդամ է դարձել ինչ-որ բանի արդյունքում	Տառապում է պոլիոմիելիթով, պոլիոմիելիթի հետևանքներից, պոլիոմիելիթի գոհ
Մտավոր հետամնացություն ունեցող մարդ (միայն չափահաս մարդկանց համար)	Թերհաս, մտավոր թերի

Զարգացման հապաղում ունեցող երեխա, դանդաղ ընկալող երեխա, մտավոր հատուկ կախքներ ունեցող մարդ	«Արգելակված», թերամիտ, դեբիլ
Դաունի համախտանիշով մարդ (երեխա)	«Դաուն», «մոնդոլոիդ», «դաունիկ»
Աուտիզմ ունեցող մարդ (երեխա)	«Աուտիկ»
Էպիլեպսիա ունեցող մարդ, ցնցումներին ենթակա մարդ	Էպիլեպտիկ, ցնցումավոր
Հոգեկան խնդիրներ ունեցող մարդ, հոգեկան խանգարում ունեցող մարդ	Գիժ, հոգեկան
Կույր, չտեսնող, վատ տեսնող մարդ	Լրիվ կույր
Լսողության խանգարում ունեցող մարդ, թույլ/վատ լսող մարդ, լսողության թերություն ունեցող մարդ/երեխա, խուլ մարդ, չլսող մարդ	Խուլ-համր, խուլ
Շփման դժվարություններ ունեցող մարդ, մարդ, որը չի կարող խոսել, համր մարդ	Համր

Վարվելակերպի ընդհանուր կանոններ

- Երբ Ձեզ ծանոթացնում են հաշմանդամություն ունեցող անձին, շատ բնական է սեղմել նրա ձեռքը. նույնիսկ նրանք, ովքեր դժվարությամբ են ձեռքը շարժում կամ օգտվում են պրոթեզից, կարող են սեղմել Ձեր ձեռքը աջ կամ ձախ ձեռքով, ինչը լիովին ընդունելի է: Եթե մարդը չի կարող ձեռք սեղմել, ողջունեք նրան գլխի շարժումով կամ ժպիտով:
- Դիմե՛ք անձին ուղղակիորեն: Երբ գրուցում եք հաշմանդամություն ունեցող անձի հետ, դիմեք անմիջապես նրան, այլ ոչ նրա ուղեկցին, օգնականին կամ սուրդոթարգմանչին:
- Երբ երկար գրույց եք վարում անվասայլակից օգտվող անձի հետ, ինքներդ նստեք աթոռին, կամ, եթե դա հնարավոր չէ, ծնկի իջեք, որպեսզի Ձեր և նրա աչքերը գտնվեն մի մակարդակի վրա: Նույնը վերաբերում է նստած դիրքում գտնվող ցանկացած այլ անձանց, ինչպես նաև ցածրահասակ անձանց հետ զրույցներին:
- Եթե հանդիպումն այնպիսի անձի հետ է, որը վատ է տեսնում կամ չի տեսնում, անպայման ասեք Ձեր անունը և այն մարդկանց անունները, որոնք Ձեզ հետ են: Եթե Դուք խմբում եք, ապա խոսելիս նշեք, թե ում եք դիմում տվյալ պահին և կրկնեք Ձեր անունը: Ճաշասեղանի շուրջը նստելիս՝ համառոտ նկարագրեք չտեսնող անձին սեղանի վրա գտնվող իրերի և ուտեստների դասավորվածությունը:
- Երբեք մի հենվեք սայլակ օգտագործող անձի սայլակի բռնակների վրա (նույնիսկ հանգստանալու նպատակով): Սայլակը տվյալ մարդու անձնական տարածքն է:
- Եթե անձն ունի լսողության խնդիր՝ իր հետ խոսելիս նստեք այնպես, որ լույսը Ձեզ վրա ընկնի, մի փակեք խոսելիս Ձեր բերանը. չլսող անձինք հաճախ կարդում են ըստ շուրթերի:
- Մի շփոթվեք, եթե «վրիպում» եք թույլ տվել, ասելով՝ «Կտեսնվենք» կամ «Դուք լսել էք այդ մասին» այն անձին, որը չի կարող տեսնել կամ լսել: Չտեսնող և չլսող մարդիկ հաճախ օգտագործում են այս նույն արտահայտությունները:
- Չտեսնող անձին ուղեկցելիս քայլեք նրանից մի փոքր առաջ:
- Եթե Ձեզ թվում է, թե հաշմանդամություն ունեցող անձին օգնություն է պետք, հարցրեք նրան այդ մասին: «Վատթարագույն» դեպքում նա կմերժի օգնության առաջարկը: Եթե օգնություն, իսկապես, պետք է, սպասեք, մինչև այն ընդունեն, հետո հարցրեք, ինչ և ինչպես անել:
- Հաշմանդամություն ունեցող անձինք ֆունկցիոնալ խանգարումներ ունեցող նորմալ մարդիկ են: Պետք չէ երկար ժամանակ ակնապիշ նայել նրանց:
- Պետք չէ հաշմանդամություն ունեցող անձին ավելորդ խնամք տրամադրել. թույլ տվեք վերջինիս լինել հնարավորինս ինքնուրույն:
- Թույլ տվեք ձեր երեխային խոսել հաշմանդամություն ունեցող մարդկանց հետ: Ցավալի է, երբ ծնողները արգելում են նման շփումը. երեխաները շատ զգայուն են:
- Մի լարվեք և եղեք բնական: